ԳԼՈՒԽ 2

ԱՄԲՈՂՋ ՑՈՒՑԻՉՈՎ ԱՍՏԻՃԱՆ ՄԻԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ԲԱԶՄԱՆԴԱՄՆԵՐ ՌԱՑԻՈՆԱԼ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 5. ՀԱՆՐԱՀԱՇՎԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՐԱՆՑ ՀԵՏ

Նույնական ձևափոխություններ: Ռացիոնալ արտահայտությունների ձևափոխություններ

Ինչպես արդեն հայտնի է՝ հանրահաշվական արտահայտությունն անվանում են ***ռացիոնալ***, եթե նրանում եղած բոլոր փոփոխականների (տառերի) հետ գումարման, հանման, բազմապատկման, բաժանման և ամբողջ աստիճան բարձրացնելու գործողություններից տարբեր այլ գործողություն չի կատարված:

Հիշենք նաև հետևյալ կարևոր փաստերը:

Ռացիոնալ արտահայտությունները, իրենց հերթին, բաժանվում են երկու խմբի՝ ***ամբողջ արտահայտություններ*** և ***կոտորակային արտահայտություններ***:

Ամբողջ արտահայտություն են համարվում բոլոր այն ռացիոնալ արտահայտությունները, որոնք չեն պարունակում բաժանման գործողություն փոփոխականների նկատմամբ:

Կոտորակային են կոչվում այն ռացիոնալ արտահայտությունները, որոնք ամբողջ չեն: Այլ կերպ՝ կոտորակային արտահայտություններն այն ռացիոնալ արտահայտություններն են, որոնք պարունակում են փոփոխականների հետ կատարվող բաժանման կամ բացասական ամբողջ ցուցիչով աստիճան բարձրացնելու գործողություն: